

ՊԱՅՄԱՆՔ

ՊՐԻՆԿՈՐԱՆ

Տարեկան 12 Ձր.
Վեցամսեայ 6 Ձր.

ՄԵՏԱՍՈՒՄԱՆ


Երկու քիւր մէկ ծրարով
Տարեկան 14 Ձր.
Վեցամսեայ 7 Ձր.

ՍՍԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլար
Վեցամսեայ 1.50

ԿԱՆԻԿ

Ծանոցման տողը
20 տակիւ



ԼՐԱԳԻՐ

ԱՂԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏՈՐԱԿՈՒԹ ԸՄԵՆ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՍՈՑԻ

Rédaction du journal

«travounk»

VARNA (1 gr.)

Редакция

на ВѢСТНИКЪ

«travounk»

ВАРНА

Գրադրութիւնը եւ չեմ
տրուիր

ՈՍՈՑՆՈՐԴԱԿԱՆ ԽԵԴԻՐԸ

Բաւական տարիներէ ի վեր յուզուող Պուլկարահայոց առաջնորդական հարցը վերջին օրերս կրկին կնճռոտութիւն մը ստացած է։ Յայտնի է թէ պուլկարահայութիւնը իր պաշտօնական մարմիններու միջոցաւ իրաւունք տուած էր Վառնայի Թաղ. Խորհուրդին որ յանուն ամբողջ գաղութին Վեհ. Կաթողիկոսէն խնդրէ փորձառու, ձեռնհաս ու բարձրաստիճան եկեղեցականի մը առաջնորդ անաշխարհական ընտրութիւն կատարելու։

Կաթողիկոսարանը երկար ընթացքէն վերջ՝ օրին մէկը հրամայեց որ մենք մեր առաջնորդը ընտրենք ու Պոլսոյ Պատրիարքարանին վաւերացնել տանք։ Արդէն այս հրամանը ցոյց կուտար թէ Վառնայի Թաղ. Խորհուրդոյ կողմէ ուղղուած գրութիւնը ուշի ուշով չէ կարգացուած և անով տրուած բացատրութիւնները չեն ըմբռնուած։ Վեհ. Կաթողիկոսին զրկուած զբոսութեան մէջ որոշապէս ըսուած էր թէ Պատրիարքարանը եթէ փափաքի իսկ անկարող է մեզ զրկել մեր ուղածը կամ օգտակար ըլլալու յատկութիւնով օժտուած եկեղեցական մը։ Այսչափ պարզ իրողութեան մը Կաթողիկոսարանի մէջ անհասկանալի մնալը զարմանալի ու ցաւալի էր, և առնուաբար պատասխանը հակասութիւն մըն էր եղած խնդրանքին։

Իսկ յանկարծ Տաճատ վարդապետին կոնդակ մը ի ձեռքին առնակնալ երեւումը մեր մէջ հակասութեան հակասութիւնն էր։ Այո՛, մենք եկեղեցական մը ուղեր էինք Կաթողիկոսէն, որ երկար լուծեմէ յետոյ չեմ զրկեր, ուրիշ դուռ զարկէք պատասխանէր էր, բայց 15 օր յետոյ ահա կը զրկէր եկեղեցական մը, սակայն ոչ պահանջուած յատկութիւններով օժտուած մէկը այսինքն անփորձ արեւայ մը, ձեռքը բռնած հայերէն չոր կոնդակ մը։ Անհասկացողութիւնը ու

հակասութիւնը կատարեալ էր։ Տաճատ վարդապետ կարող էր թերեւս կազմակերպուած վիճակի մը վարիչն ըլլար բայց ոչ քաղաքական բարդութիւններով շարժապատուած անկախակերպ վիճակի մը կազմակերպիչը ըլլալու։ Նաեւ Վեհարանը պարտէր մտածել թէ իբր յեղափոխական ռուս կառավարութենէն արտաքսուած եկեղեցական մը պուլկար կառավարութեան պաշտօնապէս ճանչցընելը մէկէ աւելի խոշոր արգելքներու կը հանդիպէր։

Վերի հակասութիւններուն ու սխալներուն հետեւանք պէտք է նկատել Պոլսոյ պատրիարքարանի կողմէ եղնիկ Դ. Պալապոսեանի Պուլկարոյ համար հոգեւոր հովիւ նշանակուելը։

Այս եկեղեցականի մասին ըստացուած աննպաստ տեղեկութիւնները մէկ կողմ թողլով, պէտք է անմիջապէս ըսել թէ հոգեւոր հովիւ անունով մենք ոչինչ չենք հասկնար։

Նախ թէ մեր հովիւը մենք ընտրելու ենք։

Երկրորդ՝ իբր հովիւ վարդապետի մը մեր մէջ պտտելը անհրապարակ է մեզ համար, և հետեւաբար զինք պահելու համար մեր կողմէ ծախքերու ենթարկուելը յիմարութիւն։

Երրորդ՝ եթէ եղնիկ վարդապետը միայն առաջնորդական ընտրութիւն կատարել տալու համար կը շրկէ Պատրիարքարանը, սա պէտք է մեզ վստահեցնէ թէ՛ պիտի կրնայ մեր ընտրած եպիսկոպոսը զրկել մեզ Հոգեւոր Ներսէս Եպիսկ. Ասլանեանի օրինակը մեր աչքի առջեւ ունենալով, չենք սեզեր նոր յուսախաբութիւններու ենթարկուել։

Ըստ մեզ, եղնիկ վրդ. Գալ. Բազմեան դեռ ճամբայ չելած պէտք է վերի պարագաները հասկըցնել Պատրիարքարանի և կանխաւ ստանալ անկէ ընտրելեաց ցանկ մը, որուն մէջ նշանակեալ եկեղեցականները երբ ընտրուին

Պատրիարքը զրկելու կարող ըլլայ։ Եթէ ոչ եղնիկ վարդապետ պարագայ յոգնութիւն յանձն չառնէ Պուլկարի գալու և մեր եկեղեցական անտուկները անօգուտ ծախսերու ենթարկելու։

ԹՈՒՆՑԻԿ ՆՈՒՅԵՐ

Դեռ ոչ հեռաւոր անցեալ մը մեզ կը բաժնէ այն եռուզեռուն կենսաշրջանէն որը ապրեցաւ ժամանակին Հնչ. Յեղ. Կուսակցութիւնը, վայելելով իր ու իր փառք ու պատիւ ամենուրեք անխոր, ուր հայուն կուրծքին տակ հայացի սիրտ մը կը տրոփէր։

Կը յարգուէր նա, զուգէ չափազանցօրէն՝ մինչեւ իսկ պաշտօնի աստիճան, ալմեն անոնցմէ, որոնց խելապատակին մէջ ազատութեան վսեմ գաղափարը տեղ մը անկրն մը գըսած էր թառելու։

Նւ վերջապէս եղան երանելի ու սակայն վաղանցուկ օրեր, յորում Հնչ. Կուսակցութիւնը փառաց զենիթն բարձրացած կ'առաջնորդէր պարզապէս այն համայնքէն, որուն ինք կը պարտէր իր ծնունդը՝ եւ յանուն անոր տառապանքի բարձման՝ կամաւոր կերպիւ, մարտի ասպարէզը իւրին հաճոյք իբրեւ զօրավար ընտրած էր։

Վատօգին հոտը եւ հրացանի բամբուլներ, իրեն առաւել հաճոյք ու գոհունակութիւն կը պատճառէին, քան տղազան անուշահոտ հեղուկները ու սփռակին դաշտալիկը։

Դեռ եւս սկսեալ ու անփորձ յեղափոխութիւնը, իւր նախնական քայլերուն մէջ իսկ, կրցաւ ու զիտցաւ դիւթիւ եւ պարտելով այն բոլոր ընդունակ՝ յեղափոխութեան հակամէտ, կամ այլապէս ըսելով, լաւ հաղորդիչ սըրտերն, որոնց թիւը բազմաթիւ պարագաներու եւ միջավայրի անյարմարութեանց, գոհունակութեամբ կարճա՛նադրենք հոս, Թէ լեզուներու կը հասնէր։

Այսպէս թէ այնպէս, Հնչակ. գործունէութիւնը՝ անսպաթաք յառաջ կընթանար, ինչպէս ի Պոլիս, նոյնպէս ալ գաւառներու մէջ՝ ընկերներու ցանցաւ շարքերը օրօստ օրէական ստուարացումով կը բազմապատկուէին։ Տենդոտ ու խանդոտ գործունէութեան հայրենասիրտը չունէ մը կարծես կը փչէր ամեն վայր, թէ ի կեղծուն եւ թէ մասնաճիւղերու մէջ։

Ոչ ոք կը համարձակէր, որդոքի արդար կամ անիրաւ ձայն մը՝ ձի մը բարձրացնել ժամանակին Հնչակեան

ուղղութեան կամ գործելակերպի նըկատմամբ։ Ինչպէս գրիչներ կը պակսէին, իսկ գտնուածներն ալ արդէն անգոր կը գրային իրենք գրիչը գտնէն... սարսափէն։

Պարզ ու մեկին բացատրութեամբ, գերեզմանային բացարձակ լուծիւն մը կը արեւոյտէր գրիթէ ամեն խաւերու մէջ, խորհրդաւոր ու դաժան լուծիւն մը որ իր մէջ կը պարփակէր ամեն ինչ եւ ամենէն քստմեցուցիչ հեռանկարը շատ մօտիկ ապագային, ու վերջապէս ի մի բան, կենսաբէ աւելի մահ կը բուրդէր ան։

Կիսազարգ ու տնաս ազգերը, (նեւրոպութիւն բացատրութեան սոյն ձեւին) որոնց չըջանալէն հեւ ի հեւ գուրս նետուելու գերագոյն ճիւղեր կը թափենք, դեռ մինչեւ իսկ այս առիթը կարգացուած պահուն։

Սակայն հոն, մի քիչ հեռուն՝ մեր աչաց տառը կը պատկերանայ մարտիրոսներու լայնածաւալ գերեզման աշխարհ Հայաստանը, իսկ հոս դեռ կը լսենք մեր նահատակ եղբարց արիւնէն ձեւացած փրփրեալն ու կարկաչահոս վտակին սրտատոչոր հառաչը, որ մեր ականջն ի վեր, կը ձայնէ յար. վրէժ, վրէժ արբաղան բառը։

Անոպայ սրտերն անգամ, ի գութ շարժելու չափ ցնցիչ, թէեւ ինքնին պարզ ու միավանկ, սակայն իսկապէս վսեմ, բազմիմաստ, պիտի ըսէի այդ պատգամախօս բառին իմաստը, չի կրցան ըմբռնել սակայն մեր գարաւ վերջիկ խորրատազգայնները։

Մեր եռանդոտ հայրենասէրները, տեսակ մը յանցաւոր պինդ-գլուխութեամբ դեռ եւս չեն յօժարիր թափանցել ոգւոյն այն վեհ բառին՝ որը ցողուած եւ մաքրացած է, մեր քանակը յիսուն հազարի հասնող անմեղունակ որբիկներու շինչ ու վճիտ արտօսումով ու երեքս նուիրագործուած թիւը հարիւր հազարներու բարձրացող տարածում նահատակներու արեւմբը։

Երախտագիտական անգանցանելի պարտք մը կը ծանրանայ անձնիւր հայ անհատի վրայ, իրենց օրերու մէջ՝ ջերմ յարգանքի լայն բաժին մը յատկացնելու ի յիշատակ մեր վաղաժամ մարտիրոսներուն, որոնց լուսնիկէն հոգիներն գերեզմանէն ալ կրնան հալածել ու շանթահարել մեզ։

ՈՐՈՏՈՒՄ

Վառնա 1 Դեկտ.

2 Ե Կ Ո Յ 8

Ներկայ տարեշրջանը լրանալու միայն երկու շաբաթ մնացած ըլլալով, ցարդ չը վճարող բաժանորդներէ կը խնդրուի որ փութան իրենց բաժնեգինը զրկել մեզ։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՌԱԶՎԱՐԱՏԷՆ

Թող ներքէ ինձ մեր հայ հասարակութիւնը, որ այս անգամ կուզեմ ծանօթացնել մուրացիկ հայ կղերականի մը այլանդակ լրբութիւնը:

Երկու օր առաջ տեղւոյս հայ սրբաւարանի մէջ, մի հայ Մշեցի Տէր Երեմիայ անուամբ քահանայ եկած էր. քայքայ օրէնքէ կամ ինչ գործի համար եկել է, ինչ որոշ յայտնի չէր, միայն այսքանը արդէն մեզ յայտնի էր որ, անցեալ տարի էլ այս կղերականը այս տեղէն բաւական գրամ շորթելով հեռացած էր, եւ ահա այս անգամ կըրկին միեւնոյն տրամագրութեան տակ, Սուլիս երթալու համար ճանապարհի ծախս ըսելով հանգանակութիւն ընել եկած էր: Սակայն իր ձեռքում ունէ պատշաճաւոր ժամինից պաշտօնական թուղթ մը չունենալուն համար, այս անգամ տեղւոյս մի քանի տունէ բաղկացեալ հայ գաղութը իւր մուրացիկ ցանկութեանը գոհացում չի տալով, քաղաքէս հեռացնել ջանաց: Բայց մի բարեսէր հայ անձնաւորութիւն անգիտակցաբար խղճալով նրա վրայ, առաջին երեկոյեան պանդոկին ծախսը տուաւ, որպէս զի հանգիստ ըլլայ: Խնդրեմ յարգելի ընթերցողք, երեւակայեցէ՛ք որքան ստորին արարած մըն է այս մեր պատուական հայ կղերականը, որ չի նայած իր ծերութեան, եւ չի նայած իր կրօնական սքեմին, պանդոկին մէջ ծառայող օտարազգի աղախիններու հետ իր կամքերը հաճեցնելու համար ամէն կերպ իրը միջոցներու գիմած է: Պանդոկապետը յաջորդ առաւօտ այդ մեր հայ բարեսէրին կը գանդաւոր որ այսպիսի իրը արարած մը իր պանդոկը հերքերնաւ է: Արդ, մենք մեր յարգելի հայ հասարակութեան խորհուրդ կուտանք որ մուրացիկանութիւնը իրենց արհեստ դարձնող իրը կղերականներու շարքը չաւելցնելու համար, անգիտակցօրէն մեր ձեռնառատ նուէրներով անոնց քմահաճոյքներուն գոհացում չի տանք, որով մեր հայ հասարակութեան արատ չըգայ:

Յ. Ս.

18 Նոյեմբեր 1906

*) Կանծենք Տէր Երեւուին է: ԽՄԲ

ՆԱՄԱԿ ԿՈՎԿԱՍԷՆ

Քաջուել եմ մի կողմը եւ տեսնում եմ հեռուից թէ ինչպէս կեղծ յեղափոխական անուան տակ ինչե՛ր են անում եւ ինչպիսի դժբաղդութեան պէտք է ենթարկեն ուսանողներս: Դաշնակցութեան կողմակիցութիւնը այստեղ հոգ. 17ից ժողովրդի փոխել է տաճկահայ դատ եւայլն, ազգային բոլոր սեփականութիւնները, նոյն իսկ հայ եկեղեցու կալուածները բաժանել է առաջարկում հայերի շրջապատող բոլոր ազգերին: Կենդրոնական ժողովի մասին արդէն ձեռք յայտնի կը լինի: Մինչեւ անգամ «կարմիր հարկերակցները պահելով մեծ պատիժ է դարձել հայերի համար:

Այդ մասին իւր ժամանակին կը գրեմ ձեզ մանրամասն թերթի մէջ տպագրելու:

Ուղիղ 10 տարի է, որ ես գործում եմ. բայց տեսնելով կեղծութիւնները եւ քաջուել եմ Բագու եւ ողբում մեր հայերի ոչխարածուծութեան վրայ, որ մի քանի եռամիսներ ազգի շինեքի նստած աղքատիկ պէս արեւն ծծում են բայց չեն կշտանում. իսկ ոչխարածուծները ցաւ չը զգալով միայն զիւրեանքը պէտք է տեսնեն կովկասահայերիս շըրջապատող ազգերը:

Տուտայ Վրացիները իրենց կողքից եկեղեցու թրաւունքները ձեռք բերին, իրենց մայրենի լեզուով ժամերգութիւնը պէտք է կատարեն, թերթեր պէտք է հրատարակեն եւ այլն եւայլն... իսկ մեր կեղծ յեղափոխականները եկեղեցիները փակել կուզեն, մայրենի լեզուն դպրոցներից դուրս ձգել եւ հայութեան նմոյշ անգամ չեն թողնում: Օրինակ ձեզ «Ներսէսեան» ազգային դպրանոցի մէջ առաջին տեղը տուել են Վրացի լեզուին, եւ այլ օտար լեզուներ: Դաշնակցական յէֆէրի ասելով շատ հայեր վրացախոս են: Էլ ինչո՞ւ է հարկաւոր դպրոցները:

Կովկասում միայն եւ միայն խորհրդանշուն նման ողբում է բառիս բուն նշանակութեամբ: Հայ «Նոր-Դար» խմբագիր պ. Սպանդար Սպանդարեանը, որ եկեղեցական կալուածների զրաւման ժամանակը առաջինը եղաւ կռիւ մղող կառավարութեան դէմ եւ աջակցող գնաց, իսկ միւսները Գալիցիան Կիւմուքի սիրահարներ էին, ասում

էին լաւ է, որ մեր կալուածները խլոււմ են հայ հոգեւորականութիւնները եւայլն:

Ա. փոստ որ նիւթականի պատճառով դադարած է «Նոր Դար»ը, ամոթ սրանց որոնք «Նոր Դար»ին բարձի են թողել, իսկ սրբիկաններին տասնեակ հազարներ են տալիս:

Սրտի կսկիծով յայտնում եմ, որ անխիղճականները եւ այլ յեղափոխութեան անուան տակ գործողները ամբողջ կովկասում միայն հայերին են թալանում: Կոտորում, եւ իրենց սափրչութիւնը հայերի գլխին են փորձում. իսկ մեր երկու կուսակցութիւնները Հնչակեանները եւ Դաշնակցականները, որ տղորուկ են հայ ազգի համար, ուշ չեն դարձնում. զեռ ուրախ են, որ հայերին այնօրին են ձգում որ «եօթ տունը մի կատիօղումը (կամ սայ) հաց ու տան»:

Թէեւ այս ոտու կառավարութեան մասին է ասուած, իբրեւ հայ ասում եմ որ սա մեր յեղափոխականների համար է մարգարէացած եւ ասուած: Ինչպէս ասացի ես մանրամասն կը գրեմ սրանց եղեռնագործութիւնները, թալանը եւայլն:

ԲԱԳՈՒ 2 ԴԵԿՏ.Ի ԼՈՒՍՆՔԱԳ.

ԲԱՅ ՆԱՄԱԿ Սիլիստրէի Պատ. Թաղ. Խորհրդին

Շուրջ երեք տարիներ լռելէ վերջ այլեւս համբերութիւններս հասած, կը հարցնեմ Պատ. Թաղ. Խորհրդի թէ՛ ո՞ր է եւ ինչո՞ւ ցարդ իր նպատակին չէ ծառայած սպիրիթ Յակոբի 500 Փր. կտակը, որով պիտի շինուէր եկեղեցւոյ յարակից սենեակ մը պանդոկոս կղերականներու համար:

Պահանջը ստիպողական ըլլալուն ստիպում ենք հրապարակաւ հարցնել ձեզ, վասն զի մի քանի շաբաթ առաջ հայ վարդապետ մը կուգայ ու առ ի չգոյէ մասնաւոր հիւրանոցի կը ստիպուի օտարի պանդոկ երթալ, եւ զեռ այդպէս շատ մը եկեղեցւոյ պաշտօնեաներ...:

Արդ, տեղը չէ՞ ըսել թէ քանի որ այդ բարեգնան ազգայինը ազնիւ տրամադրութիւնը ունեցած է կտակելու 500 Փր. սենեակի շինութեան, ինչո՞ւ

ձեռքը՝ չուշանի պէս սպիտակ ու քրնջուշ՝ նետած էր փետրալից բարձին վրայ ուր ցանցնուած էին խարտեաշ ծառերս: Կիւսկէնները յորդ ներքաշնակութեամբ մը, իսկ միւսը՝ կուժքին վրայ ինկած էր, որմէ տաք շունչ մը ու կսկծալի տրոփում մը կարտայայտուէր...: Ծապուկ ու գիւր իրանը, կէս մը ծածկած բարակ ու կաթնաթոյր ֆանէլայի մը տակ, կարծես կը թրթռար իր սիրունութեան մէջ ու կը զլլիւր խնկէ ու կըրտտ փաշան:

Երկար ատեն սեմին վրայ կեցաւ Շէվքի փաշան ու դիտեց այդ ոգորմելի գերուհին, որ այնքան արցունք թափած էր՝ իր ոտքերը թրջելով, այնքան աղաչած էր իր ազատութեանը համար: Յետոյ, մօտենալով մահճակալին, ձեռքը կամացուկ մը դրաւ անոր քրտնաթոր ու մեղանուշ ճակատին վրայ եւ համբուրեց չրթունքները:

Մանկամարդ աղջիկը ջղային սարսուռ մը զգալով, բացաւ աչքերն ու ընդոտտ վեր հլաւ: Կարծես թէ սեւ օձի մը հպած ըլլար իր անուշ ու վարդաբուր շրթները... Կարծես թէ պաղ ու զարչահամ թոյնի մը ազդեցութիւն

մինչեւ հիմա կը ձգձգուէր, երբ այդ գրամի վրայ հիմա տոկոսն ալ աւելնալով բաւական է վերոյիշեալ նպատակը իրագործելու:

Անհամբեր բացատրութեան սպասող՝ ՍԻԼԻՍՏՐԵԱՅԱԿ ՀԱՅԵՐ

ԱՐԺԱՆԱԽՈՐ ԳՈՒԼՅՍ ՄԸ

Սօֆրացի Պօկտան Տէմբրճիկ խումբադրատուն ներկայացաւ եւ հետեւեալ շնորհակալականը տուաւ մեր յարգելի եւ հանրածանօթ բժիշկ Տօքթ. Թագաւորեանի մասին:

«Ձեմ կրնար լուռ անցնիլ ու չը յայտնել իմ խորին շնորհակալութիւնս Մեձ. Տօքթ. Թագաւորեանի՝ որ իր բժշկական բարձր կարողութեամբ զիս սոսկալի հիւանդութենէ մը ազատեց: Ութը ամիս է ի վեր սոսկալի հիւանդութենէ մը կը տառապէի, ամբողջ գիշեր չէի կրնար քնանալ, կը խեղճուէի ու սրտի փափախումէ կը տանջուէի, օրն ի օրուն կը հաղայի ու ինչ որ ուտէի կը փսխէի եւ այս պատճառներով ասկաւ առ տակաւ կը նիւարանայի, վերջապէս սարսափելի էր վիճակս: Քանի մը բժիշկներու դիմեցի, բայց ապարդիւն: Բարեկամացս խորհրդովը Տ. Տօքթ. Թագաւորեանին դիմեցի. որ մասնագէտի ճարտարութեամբ եւ լուրջ ջանքերով մէկ ամսուան մէջ յաջողեցաւ կատարելապէս բժշկել զիս: Փառք եւ պարծանք որ Պօկտանի միջոցով իմ անուշ ժամը մը կը գանուի:

Պ. ՏԷՄԻՐՃԻԿԻ
14 Նոյ. 1906

Մ. Խ. — Հրատարակելով վերի գրութիւնը, մենք ալ մեր կողմէ կաւեցնենք թէ Տօքթ. Թագաւորեանի մասին շատ անգամ նոյնանման գովեստներ ընդունած ենք եւ անվիճելի կը գտնենք իր կարողութիւնը:

ՏՃԵԼԻՔ

ՄԷՆԶԻԼՃԵԱՆ ԱՂԱՍԵԱՆ Եւ Ընդ. Ի Ֆիլիպէ

Պէտք ունին դարգեր մը հմուտ պուրկարերէն լեզուի ինչպէս նաեւ ֆրանսերէնի կամ գերմաներէնի:

Նը ցնցեց զինքը հանդարտ քունի մը մէջ:

—Ձէ՛ որ ցիւրիկ ատեն մի՛, քնանար ըսի քեզի, նկատել տուաւ Շէվքի փաշան իր գոռոզ ձայնը մեղմացնելով: Ինչո՞ւ մտիկ չես ընել ինձի, Ձիւլ, Քի՛:

Մանկամարդ աղջիկը, որուն Ձիւլֆի անուն տուած էր հրամանատարը, մահճակալէն վար իջաւ ու դուրսը կուրծքին վրայ կախելով թոթովեց:

—Ձեմ քնանար... բայց այսօր հոգիս նեղացաւ:

—Ինչո՞ւ... Սէրֆինաղ չեկաւ քու վրդ:

—Ո՛չ:

—Կը սիրե՞ս այդ աղջիկը:

—Ինչպէ՞ս չեմ սիրեր... չէ՞ որ այս ապարանքին մէձ բաղադրից ենք իրարու: չէ՞ որ մեր երկուքս կեանքը ստուերի մը պէս պիտի անցնի...

—Ինչ ըսել կուզես, Ձիւլֆի՛, միթէ՞ գոհ չես վիճակէդ: Գոհ չե՞ս բաղդէդ, գոհ չե՞ս այն բոլոր գործունքներէս զոր կը տածեմ՝ քեզի համար կը տեսնես որ պերուհի մը չեմ նկատեր քեզ. կը տեսնես որ այս ապարանքին մէջ սրտիս ամենէ՛ն մօտիկ ու հոգիին

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

ԱՌԱՋԱԿԱՊԵՏՐ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՇԵՎԱՅԻ ՓԱՇԱ

(Շար. նախորդ թիւէն)

Մենձ հանրմ, որ յատուկ դիտաւորութեամբ ըսած էր այդ խօսքը. չը համարձակեցաւ կրկնել ու հաստատապէս ապացոյց մը նշանակել: Հետեւաբար, լսու մնաց ու փաշային երեսը նայեցաւ:

Շէվքի փաշա հեռացաւ:

Ան ատեն մեծ հանրմ լայն շունչ մը առաւ ու մրմիջեց ինքիւրեն:

—Վատ արարած, բաւական չէ արցունքի ու հառաչանքի մէջ այնքան թշուառ գերհուրներ չարչարելը. տակաւին նաեւ քարը փնտռել կուզես: Երբէ՛ք, երբէ՛ք չի պիտի յաջողիս... անկա ազատեցաւ ձեռքէդ ու գուն անոր հետքը չպիտի կտրենաս:

գտնել: Ա՛խ, այս անգամ վնասդարձար... բայց գիշերով ապարանքդ մտցուցիր երկու մանկամարդ աղջիկներ, որոնց մին հայ է, իսկ միւսը՝ ասորի: Աստուած՝ իմ, երբ պիտի ըլլայ այն օրը, ուր այս անէժքներով լի ապարանքը չը տեսնեմ...:

Ու սրտաբեկ վիճակով մը զէպի ապարանքը դիմեց եւ սենեակը քաշուեցաւ:

Շէվքի փաշա պարտէզին ամենէն հիշատակ թաւառքներու մէջ շրջադաշտէ ետքը, վերադարձաւ ու հարիւրանոցը մտաւ:

Այն մասը, ուր կը գտնուէր հարեմանոցը, բաժնուած էր քանի մը կա. հազարով ու պերճանքներով լի սենեակներէ: Շէվքի այդ սենեակներէն մէկուն դուռը կեցաւ ու կամաց մը հրեց զայն: Դուռը ճոթա ծխիկին վրայ ու բոցուեցաւ: Սենեակին մէջ, մէկ անկիւնը, մահճակալ մը կար, որուն վրայ ինկած կը քնանար մանկամարդ աղջիկ մը:

Հազիւ տասնութ տարու, բարձրահասակ, փափուկ կազմուածքով տղայնայնայն, հրէշտակային կերպարանքով ու գիղանի էր ան: Մէկ

ՎԵՐ ՀԵՉ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Աղէքսանարիայէ մեզ կը գրեն Վուզեմ մէկ քանի խօսք ալ ընել տեղւոյս Հնչ մասնաճիւղին նկատմամբ որ վերջերս բոլորովին ըմբոստ դերք մը բռնեց ընդ պատգ ժողովի որոշումներուն հանդէպ, որոնք կամայական միակողմանի և մութին մէջ ծածկուած հրահանգներով ներկայացուցան ընկերներուն՝ որոնց պահանջներուն բոլորովին հակառակ էին ատոնք, ու անցեալին մէջ գործուած ձախորդութեանց չարունակութիւնը Արդուեանի մը խելագատակին և քմահաճոյքին վրայ չափուած ձեւակերպութիւններով բռնաբարուած են օրէնքները։

«Եւ այս ամենուն առջեւ բնականաբար մասնաճիւղիս ընկերները չէին կրնար անխօս մնալ ուրախ եւ ըսելու որ 40 հոգիէն միայն 5ը՝ ընդունած են նոր կանոնադրը, իսկ միւսները կը մնան ցնոր տնօրինութիւն, որ միակ Ամերիկայի մասնաճիւղերէն կսպասենք, Զենք գիտեր թէ հոգ ի՞նչպէս են ընկերները ի՞նչ որոշման վրայ կը մնան»

Հնչակ. Զինուոր մը

«ԼՈՒՍԱՐԵՐԻ» մէջ կը կարգանք։

«Անցեալ ամսոյն մէկին Վեր Հնչ կուսակցութեան ընկերներուն հրապարակաւ ուղեցի յայտնել ամեն մասնաճիւղի անկեղծ ընկերներուն հրապարած եմ հանաբաժնեմ խաչագոյ ստահակներու երեսէն, ինչ որ կը հաստատէ Վառնայի ընկեր Արգասը նոյն են մեր ցաւերը։

Եղիպտոսի ննչ. Վարչութեան անդամ

Յ. Գրիգորեան

1906 զեկտ. 5 Աղէքսանդրիա

Յ. Գ. Տեղւոյս ընկերներն մեծամասնութեամբ հրապարած են բացի հինգ ոչխարամիտ անդամներէն, որոնց մինն է, կեղծ նահանգային վարչութեան անուն առած Վեռնաբուսիկ կոյր անդամը» ինչպէս Օտեան որակած է։

Նոյն

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Աղթամարայ կաթողիկոսական տեղապահ տ. Յովսէփ եպիսկոպոս նամակով մը դիմած է Պոլսոյ պատրիարքին, յայտնելով որ տեղացի մէկ քանի կիներ դիմած են իրեն, խնդրելով որ առնօրինութիւն մը ընէ իրենց ամուսիններուն մասին որոնք օտար երկրի մէջ կը գտնուին երկար տարիներէ ի վեր և բոլորովին լքած են չլինէնք։ Տ. Յովսէփ եպ. ալ այս մասին պատրիարքարանէն տնօրինութիւն մը կը խնդրէ։

— Պոլսոյ պատրիարքարանը 4000 ոսկիի բաց մը գոյացուցած ըլլալով յանձնախումբ մը կազմուած է այդ բացը գոցելու և պիտոճէն հաւատարակչութեւ պաշտօնով։ Առաջարկուած է բարեփոխող գործունեութիւն ընել, այս նպատակաւ Խառն ժողովը յարմար գատեց հինգ աշխարհական անձերու յանձնել բարեփոխներու ըլլալիք այդ դիմումը։

— Ռուսներէ մեզ կը գրեն. «Մաշտոց վարդապետ Հ. Յ. Դաշնակցութեան ի նպատակ հանգանակութիւն ընել փորձելէ յետոյ դէպի Ամերիկա ճամբորդեց իր հետ առնելով իր եղբոր ապօրէն ու լքած կինը։ Վարդապետը փոխանակ եղբայրը համոզելու որ ապրի կնոջը հետ՝ որմէ զաւակ

ներ ունի, ինք անոնց միացումը անկարելի ըրաւ. նախ կնոջ սիրտը գրաւելու համար իր հարազատ եղբորը դէմ գաւեց անոր զաւակը գողնալով ի նպատակ կնոջ և յետոյ ժամանակ մը կնոջ հետ մէկ յարկի տակ բնակելէ յետոյ զանի բոլորովին իր էրիկէն հեռացնելով Ամերիկա տարաւ։

— Ողբացեալ ՍՏԵՓԱՆ ԱՂԱՄԵԱՆԻ որբերուն ի նպատակ կատարելիք հանգանակութիւնը միայն տ. Արիստղոմ քահանայի միջոցաւ սկսուած ըլլալով գոհացուցիչ արդիւնքի մը չէ հասած, ծաւալի է որ Թաղ. Խորհուրդը այս մասին անփոյթ գտնուած է և երկու յարմար անձնաւորութիւն չէ ընկերացուցած քահանային, որ նորեկ և տեղւոյն անծանօթ ըլլալով հաշիւ կրցած է 210 ֆրի չափ գումար մը հաւաքել։

— Պատրիարքարանը պաշտօնապէս դիմած է Թիւրք կառավարութեան, Եղնիկ Ժ. Վ. Գալբազեանի Պուլկարիոյ համար և Վահան Ժ. Վ. Յակոբեանի Ռուսմանիոյ համար իբր հոգեւոր հովիւ պաշտօնաթուղթերը խնդրելու։

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

ԹԻՊՈԳՐԱՔ Ա. հատոր (162 էջ) 1 ֆր. Բ. » (433 էջ) 2 ֆր. ԼՈՐ ԵՐԳՈՐԱՆ կամ՝ ՄՐՄՈՒՆՉ ՀԱՅԿԱԿԻՆ երկրորդ անգամ տպագրուած եւ ճոխացած. Գին 1 ֆր. ՆԵՏԱ կը պատկերացնէ Պուլկարեանի նիստ ու կայքը ու թուրքերէ կրած տառապանքը անոնց ազատութեան առաջ. Գին 50 անգիմ ՀԱՅՐԵՆԻԿԻ ԶԱՔԵՐ Պատկեր մը Տաճկահայաստանի իրական կեանքէն։ Զեղչեալ գին 1 ֆր. Այս գրքերը ստանալու համար դիմել ՎԱՌՆԱ «Ի ր աւ ու լ յ» ի խմբագրութեան

ԷՅՍԼԻ

Փիլիպէտէ նէշը օլընան Վէհալի» խմբիստէ թիւրքէ վարագրաբէնին 40ընճը նօմէրօսը հէրքիմին թարաֆընտան իսէ իտարէխանէմիզէ կէօնաէրիմիշ օլմաղլէ, պիր տէֆա աթֆը նազարա մէճպուր օլտըգ։ Մէղքիւր նօմէրօտա Ախթարալար սէրլէվհալը պիր քիւֆիւր մէճմուսը կէօղիւմէ իրիշտի։ Պու քիւֆրանըն իմզասըզ օլմասը վէ Պուլկարիպտաքի թիւրքլէրէ Վերմէնիլէրտէն ալըշվէրիշի քէսմէլիսիլզ տէմէսի իլէ մէնֆաաթը չախսիլէի մէտէնիլէթ ու ինսանիլէթտէն միւրատճահ կէօրէն պիր իզպալբէրէսթ սէրսէրիին վէ մուհարրիլիք նիքեապը ալթընտա թիւրքէ հալինին ճէհալէթ ու թաասուպընտան իսթիֆատէ իթմէք հալէսինտէ օլան պիր մուհարրիլիք մէլուընէ հսէրի քէրիհէսի օլտըղը անլաշըլտը։ Մաթպաա վէ հուրուֆաթը մուզատտէսէ իլէ օլ տէրէճէ միւլթիլէրիլթ ու մէլանէթէ քէնտի քէնտիսին զարգ իտէն օլսա օլսա տին ու վիճտան, ատապ ու ախլազ, ալ ու հայա թաշըմայան նատան ու էպլահ վէ միւրթէքիպ պիր թիւրք օլապիլի իտի։

Օ՝ մէլանէթ մէճմուսը օլան պէնտտէն տօլայը պիզ թիւրք միլլէթինէ կիւճէնմէլիզ. պուկիպի պիտտէպ պիր կաղէթաճըլարը օլաղընտան տօլայը թիւրք վաթանտալարըմըղըն մահմուպիլէթինի պիզ մաղուր կէօրիւրիւրիւզ, զիրա հէր միլլէթտէ պաղը ատէպսիլլէր պուլընտըղը կիպի, բէք ճէհալէթտէ գալմըշ օլան թիւրք միլլէթինտէ պիր աղ զիյատէճէ պուլընտըղընա պիզ մուաֆ նաղարը իլէ պագաւըղ։

ամենէն սիրելի դուն եղած եմ Ալ ինչու կը մտածես... բա՛, ի՞նչ կը պակսի... Երբ գոհարեղէն մը տոնեմ, ամենէն թանկագինը քուկդ է. երբ հազուա մը չինել տամ, նորէն ամենէն գեղեցիկը քուկդ է... Հօրդ տունը կտաւ ու չիթ էր հագածդ, չէ...։

Զիւլֆի, որ ախուր ու մտախոհ կերպարանքը կուրծքին վրայ հակած էր՝ իր ճղէն փրցուած վարդի մը պէս, աչքը վեր առաւ, ակամայ չարժուած մը բրաւ ու կարծես հոգեւոր պոռթկացում մը չր կրնալով զսպել, բացազանջեց։

— Զեմ ուղեր... չեմ ուղեր... Թո՛ղ քուկդ ըլլան գոհարեղեններդ, թո՛ղ քուկդ ըլլան հազուաաներդ... ատոնք իմ արեւնովն ներկուած ժանգոտ չըղթաներ են՝ թեւերուս վրայ ծանրացած... ա՛ռ զանոնք եւ տո՛ւր ինձի հօրս չիթէ եւ կտաւէ հագուեսը...։

— Զիւլֆի... ինքզինքիդ եկու՛ր... նայէ՛, աղէկ մընայէ՛ թէ դիմացդ ո՞վ կայ... որո՞ հետ կը խօսիս... որո՞ւ երեսին կը պոռաս... Եւ ի՞նչ է ըսածդ ընդմիջեց Շէվքի փաշա՝ բարկութիւնը խզելով իր մէջ։

— Ես ըսածս գիտեմ եւ կը ճանչնամ դիմացինս... բայց ալ չեմ կրնար համ

բերել... ա՛լ չեմ կրնար արցունքներուս մէջ ապրիլ... դա՛րկ, սպաննէ՛, կտոր կտոր իբէ՛ զիս... նորէն չի պիտի կրնաս հոգեւոր պոռթկացումը զսպիլ...։

— Այսօր յիմարութիւնդ բռնեմ է, անանկ չէ՛. լա՛ւ, ահա՛ կերթամ... բայց կը զղջաս ետքը պոռաց Շէվքի փաշա ու դուրս ելաւ սենեկէն։

— Վա՛տ, գնա՛, ու ինչ որ կուզես ըրէ՛... պատրաստ եմ ամեն տանջանքներու դիմանալ, բացազանջեց Զիւլֆին ինքնիրեն Ալ ի՞նչ բանէ պիտի վախնամ... ահա՛ պատիւս սեւցուցիւ, ահա՛ արեւնս մտար... ու ահա՛ ոճիւր ներուզ մէջ ապրեցնել կուտաս զիս։ Զէ, չէ՛... տարիներով գերի եղած է Զէրքէղուհինձեր դարչիլի ապարանքներու մէջ, տարիներով գոթ անոր թշուառութիւնը չարաչար գործածած էք... աակից ետքը Զէրքէղուհին ալ պիտի ճանչնայ իր գոյութիւնն ու պիտի պահէ իր պատիւը...։

Մանկամարդ աղջիկը որ չէրքէղուհի ժոն էր, մեքենաբար սենեկէն դուրս ելաւ ու գաւիթի մէջ գտնուած մեծ գրադարանի մը գլորոցը գուրս քաշելով պզտիկ ու սիրուն վեց հարուած մը

հանեց անկից։ Հրազէնը լեցուն էր Տեսակ մը խնդութեամբ դարձեալ իր սենեակը մտաւ Գոցեց պատուհաններուն փեղկերը, ապակիներն էւ հաստ թաւիչէ վարագոյրները։ Դուռն ալ ամուր մը փակեց բանալիով, ու բացադռնեց ինքնիրեն։

— Անիծեալ Շէվքի՛, ի՞նչ ընեմ, բարձիք վրայ քուսն չուեննաս... իմ անմեղ արեւնս թո՛ղ ուրուական մը ըլլայ ու քեզ հալածէ բովանդակ կեանքիդ մէջ... իմ արցունքս թո՛ղ թուսաւոր լիբդ մը դառնայ ու սրտիդ է՛ն խորունկ տեղը լեցուի...։ Հրէ՛շ, ասկից ետքը քու գերիք չեմ... ասկից ետքը սեւ հողը պիտի ծածկէ զիս Երբ մտնես այս գարշելի սենեակը չի պիտի գտնէս Զիւլֆին, չի պիտի տեսնես Զէրքէղուհին... անիկա արեւնի մէջ ինկած պիտի ըլլայ... անիկա դիակ մը դարձած է...։ Հեռո՛ւ, հեռո՛ւ այս ոճիւրներով լի յարկէն, որուն գարշութեան մէջ կապրինք...։

Ու հրազէնը անյադարար բերին ասրաւ, ըլլակը քաշեց եւ պոյթեցուց։ Եւ որովհետեւ սենեակը չատ խոր ու ամեն կողմէ գոցուած էին անոր պատուհանները, մէկէն ի մէկ չը հաս

կցուեցաւ թէ հրազէնի ձայնը ուսկի՞ց եկած էր։ Հետեւաբար, մանկամարդ չէրքէղուհին ինկած էր արեւն ճապադիքներու մէջ եւ մահը վայրկեանական եղած էր։

Դիչերուան ժամը մէկնէր, երբ սպասուէին ներս մտնալ ուղեց. բայց դուռը գոցուած էր։ Բաւական ատեն բաղխելէ ետքը, Շէվքի փաշան իմաց տրուեցաւ եղելութիւնը։ Հրամանատարը բարկութեամբ մը դուռը փախջախեց ու ներս մտաւ։

Տեսարանն, որ պարզուեցաւ իր աչքին լամբարի մը աղօտ լուսովը, քրտմանիլ էր։

Հո՛ն, այդ սենեկին մէջ, անմեղ զո՛ւ մը եւ մարդկային կերպարանքով հրէշ մը կային. մին արեւնի լեղբերու ներքեւ անշնչացած դիակ մը դարձած էր, իսկ միւսը՝ գազանային վայրագ յուզուի մը մէջ մերկացած ոճրագործի մ'երեւոյթն ունէր։

(Շարունակելի)

печатница Д. Тодоровъ и С-ие —Варна